

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ս:ՍԱՀԱԿ ԵՒ Ս.ՄԵՍՐՈՊ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Մինչեւ Դեկտեմբեր 31, 1970

1970-71 Տարեշրջանի խնամակալութեան որոշումով Ա. Սահակ եւ Ս. Մեսրոպ Վարժարանի վերամուտի արձանագրութիւնները տեղի ունեցան Սեպտեմբեր 6, եւ 13, 1970 Կիրակի օրերը եւ դասաւանդութիւնները վերսկսան Շաբաթ Սեպտեմբեր 19, 1970 առաւօտեան ժամը 10.00ին, նախակրթարանի բաժինը՝ Ս. Երրորդութեան Եկեղեցւոյ եւ Մանկապարտէզը՝ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ սրահներուն մէջ:

Առաջին օրէն իսկ յայտնի եղաւ որ վերոյիշեալ վայրերը նեղ պիտի գան օրէ օր աճող աշակերտութեան թիւին համար, հետեւաբար խնամակալութիւնը դիմում կատարելով նորթ ճորքի կրթական Տնօրէնութեան ապահովեց համար 7677 արտօնագիրը ԿՐԻՆՆԱՆՏ ԲՈՏԻ հանրային վարժարանի տասնըմէկ սրահներն, ուսուցչարան մը եւ մարզասրահ տրամադրուելով Շաբաթօրեայ Հայ Դպրոցի դասաւանդութեան համար, որ սկսաւ գործածուիլ վարժարանիս կողմէ նոյեմբեր 21, 1970 սկսեալ: Դպրոցը կը գտնուի՝ ՏՈՆՈՒԷ ԻՍԹ ԵՒ ԼՈՐԷՆՍ ԱՎԸՆԻԻ ԻՍԹ շրջանին մէջ:

Դեկտեմբեր ամսոյն վերջը աշակերտութեան թիւը հասած է 178ի եւ բոլորն ալ կը համախմբուին նոյն վայրին մէջ:

Նախկին ուսուցիչներէն բացի երեք հոգի, բոլորն ալ կը շարունակեն իրենց պաշտօնը եւ ասոնց վրայ աւելցած են իբր օգնական ուսուցիչներ չորս հոգի նախորդ տարուայ շրջանաւարտ աշակերտ-աշակերտուհիներէն:

Խնամակալութիւնը վերընտրած է իբր Տնօրէն, նախկին առժամեայ Տնօրէն Պարոն Եղուարդ Պարոնիկեանը, նոյնպէս վերընտրած է իբր փոխ-Տնօրէնուհի Տիկին Ժանէթ Շանլեանը: Մնացեալ ուսուցիչներն են.-

Տիկին Աղաւնի Գարակէօզեան, Մանկապարտէզպանուհի

Օր. Սոֆի Թովմասեան

,, Ալիծ Գասարճեան

Օգնականներ

Օր. Սեղա Փափագեան

,, Հուրի Գասարճեան

Նախակրթարանի համար

Տիկին Անի Արթինեան

,, Երջանիկ Չէօմլէքճեան

,, Արփի Մերաս

,, Սեղա Նիկողոսեան

,, Ազնիւ Պաղտատլեան

,, Լիւսի Քէօշկէրեան

Օրիորդ Հուրի Տէրտէրեան

,, Շաքէ Մուրատեան

,, Լենա Թաշճեան

Պարոն Գրիգոր Գազանճեան

Օգնականներ

Օր. Սեղա Քերիմ

,, Ա Ալթունեան

Պր. Հայկ Պարոնիկեան

Հոկտեմբեր 10, 1970 աշակերտութեան պատշաճ կերպով նշուեցաւ Սուրբ Թարգմանչաց Տօնը Հայր Սուրբին կողմէ, որ հաւաքուած աշակերտութեան բացառեց Թարգմանիչներուն կատարած գործին իմաստը, եւ ապա հրաւիրեց Տիկին Ժանէթ Շանլեանը, որ զեղեցիկ ու հաճոյական ոճով իր քաղցր տպաւորութիւնները հաղորդեց Մայր Հայրենիքի մշակութային եւ կրթական բարձր վերելքին մասին:

Հայկական խօսուըն ժապաւէններ ցուցադրուեցան աշակերտութեան, եւ կաղանդի առիթով Տօնածառ մը կազմակերպուեցաւ եւ աշակերտներ նուէրներ ստացան կաղանդ Պապային ձեռքով եւ հիւրասիրուեցան անուշեղէններով եւ կաթով:

Վարժարան այցելեցին Պէյրութի Վահան Թէքէեան Վարժարանի Տնօրէն Պարոն Երուանդ Պապայեան, նոյեմբեր 21, 1970ին, եւ զարմանք ու զոհունակութիւն յայտնեց որ թէ ինչպէս Շաքաթօրեայ վարժարանի մը այսպիսի կանոնաւոր աշակերտներ սահուն կերպով հայերէն կը կարդան եւ կը գրեն, ինչպէս նաեւ Դեկտեմբեր 5, 1970ին Պարոն Հայկազ Միալեան, Տնօրէն Հ.Բ.Ը.Միութեան Ամերիկայի Երջանին:

Վարժարանը փակ մնաց նոյեմբեր 14, 1970 իԹԸնի կաղանդի տարեկան տողանցքի ինչպէս նաեւ Դեկտեմբեր 26, 1970 Պաքսինկ Տէյի պատճառներով:

Հայր Սուրբը գրեթէ միշտ ներկայ եղած է Վարժարանը եւ հարկ եղած ժամանակ իր մասնակցութիւնը բերած է:

Վարժարանի մէջ կը դասաւանդուին 1 պահ հայերէն, 1 պահ Հայոց Պատմութիւն եւ 1 պահ Հայերէն Երգ:

Խնամակալութիւնս 1971 տարւոյ համար պատրաստել տունաւ գունաւոր Պատի Օրացոյցներ, նիւթական կարելոր օժանդակութիւն մը ապահովելու համար ի նպաստ Վարժարանիս:

Խնամակալութեան անդամներն են. -

Ատենապետ

Փոխ-

Ատենադպիր

Թղթակից Բարտոլղար

Գանձապահ

Խորհրդականք՝

, ,

, ,

, ,

Պարոն Տիգրան Պէրպէրեան

, , Եղուարդ Պարոնիկեան

, , Նուպար Թօսունեան

, , Հրաչ Շիշմանեան

, , Վահրամ Միսինեան

Տիկին Անահիտ Մաթոսեան

Պարոն Յարութիւն Հացունի

, , Զարեհ Ներժիվանեան

, , Բենիամին Ամբակոմեան

Նիւթական Հաշուետուութիւն

Մուտք

4,754.40 Տոլար

Ելք

3,759.94 , ,

Մնացորդ Դեկտ. 31, 1970 994.46 Տոլար

ԽԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Յունուար 18, 1971

Ս.ՍԱՀԱԿ ԵՒ Ս.ՄԵՍՐՈՊ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆ